

## ՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՒ ՍՊԱՌՈՒՄՆ  
ՀԱՐՍՈՒԹԵԱՆՑ

ՀԱՏՈՒԱԾ Ժ.Բ.

ԼՐԿԱՅՈՒԹ աշխատանաց :

ԼՐԿՈՒՔԱՌՈՎԼ ԵԿԱՄՈՒՄ ՔԱՌԻՆ ԸՆԴ  
ՀԱՆՈւՐ ՆՉԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԻՄԱՋԸՆԵԼԸՆ՝  
ու անոր տեսակները գնելԸն ետև, մէջ-  
մէկ հատուածով Ճարտարութեանց ի-  
րեք գլխաւոր գործիքներուն ԵԿԱՄՈՒ-  
ՋԸ վրայ խօսինք . աս իրեքս են ԼՇԽԱ-  
ՄՈՒՄ, ԼՆԸՔ և ԼՐԿԻՐ : — ԵԿԱՄՈՒՄ  
կ'ըսուի այսչափ կամ այնչափ ժամանա-  
կի մէջ մարդուս ձեռք ձգած վաստակը  
իր ջանքովը կամ իր մոտաւոր ու նիւթա-  
կան ընչիցը ուժովը : Լսկից կ'իմացուի  
որ ԵԿԱՄՈՒՋ աղբիւրը միայն մէկ չէ .  
որով ԵԿԱՄՈՒՄՆԵՐՆ ալ զանազան տե-  
սակ կը բաժնուին, և մասնաւոր ա-  
նուամբ իրարմէ կ'որոշուին . և են

Ա . ԵԿԱՄՈՒՄ աշխատանաց .	{	ԹՈՂԱԿ կամ վարձք <sup>1</sup> Հաճ <sup>2</sup> Վաշն <sup>3</sup> Տոկոսի <sup>4</sup> Հաս <sup>5</sup>
Բ . ԵԿԱՄՈՒՄ ԸՆԸՑ .	{	
Գ . ԵԿԱՄՈՒՄ ԵՐԿՐԻ .	{	Կալուածագին <sup>6</sup>

Ուրեմն նախ տեսնենք թէ ինչ գի-  
տելիք կայ ԼՇԽԱՄՈՒՄՔԻ ԵԿԱՄՈՒՋՆ վրայ՝  
որ է լուղակ կամ լ արջու ըսուածը :

Դիմունք որ ու և իցէ Ճարտարութեց  
մէջ իրեք տեսակ անձանց ձեռնտուու-  
թիւնը հարկաւոր է . իմաստնոյ, գործ-  
առուի և գործաւորի . ուրեմն աշխա-  
տանքէ առաջ ԵԿԱՄՈՒՄՆ ալ աս  
իրեք վիճակէ մարդիկներուն վրայ պի-  
տի բաժնուի :

1 Salaire, Rétribution.

4 Usure.

2 Profit.

5 Rente.

3 Intérêt.

6 Fermage.

Թէ որ բոլոր գործաւորաց առած  
թոշակը համեմատենք իմաստնոց կամ  
գործառուաց թոշակին հետ, բազմա-  
պատիկ աւելի կուգայ՝ գործաւորաց  
թուոյն առաւելութեանը համար . բայց  
թէ որ առանձին առանձին առնենք զա-  
նոնք, հարկաւ իմաստնոյն թոշակը ա-  
ւելի է պարզ աշխատաւորէ մը, և գործ-  
առուինը իմաստնոյն թոշակէն . որուն  
պատճառը կը տեսնենք :

Դործաւորները իրենց կողմանէ միայն  
նիւթական աշխատանքը ընծայելով,  
հարկաւ ան աշխատանքին արդար փո-  
խարէնը, որ է թոշակը, միայն պա-  
հանջելու իրաւունք ունին : Ուղակին  
չափը արդար ըլլալու համար պէտք է  
որ մէկ զգաստ գործաւորի մը անձին  
և ընտանեացը պիտոյքը չափաւոր կեր-  
պով մը կարենայ լեցընել, և կտոր մը  
բան ալ անկից կարենայ աւելնալ, որով  
տօնի օրեր, կամ հիւանդութեանը ժա-  
մանակ՝ կամ սովորականէ դուրս դի-  
պուածի մէջ կարող ըլլայ գործաւորը  
իր ապրուստը Ճարել, նաև խնայելով  
անկից՝ ծերութեանը համար ալ կտոր  
մը ստակ Ճարել : Լսկից յայտնի է  
թէ թոշակին չափը համեմատ պիտի  
ըլլայ երկրի մը սղութեանն ու ամենու-  
թեանը, և աշխատանքին չափին . բայց  
թոշակին չափը բուն որոշողը՝ գործա-  
ռուաց ուզած աշխատանքին չափն է .  
անանկ որ երբոր գործառնութիւնները  
շատնայով աշխատանքը շատնայ, թո-  
շակներն ալ կ'աւելնան . ընդհակառակն  
երբոր գործառնութիւնք դադրելով,  
ինչ պատճառաւ կ'ուզէ ըլլայ, աշխա-  
տանքը քիչնայ, թոշակներուն չափն ալ  
կը նուազի :

Դաստիարակութեան կամ վարձքը ի-  
րեն ըրած ծառայութեանը համեմա-  
տելով բարձր չէ . և շատ անգամ վարձ-  
քին մէկ մեծ մասն ալ ընկերութեան  
ցըցուցած համարմունքն ու պատիւն է :  
Լսկ բանիս պատճառը մէյմը ան է որ  
իմաստնոց ծառայութեց աժեքը սահ-  
մանելը խիստ դժուար բան է . երկրորդ՝  
իմաստնոց նպատակին մէջ աւելի մարդ-  
կային ընկերութեան օգուտ քան թէ

անձնական շահասիրութիւն ըլլալով, ան ուրախութիւնը որ իրենց նպատակին հասնելով կամ հասնելու յուսով կը զգան՝ իրենց համար մէկ վարձք մը կը սեպուի. և ան վարձքին մասն է նաև ազգին երախտագիտութիւնը, տէրութեան կամ ընկերութեան գովեստը, ու նաև նիւթական ընծաները, որոնք սովորաբար աւելի յարգ մը ունին պատուոյ, քան թէ նիւթական աժէք:

Ի այց իմաստոնք որովհետեւ միայն աշխատանք չէ, հապա ինչք ալ կը ծախեն իրենց գրուածները կամ ուրիշ տեսակ գործքերը հրատարակելու համար, անկից հանած վաստակնին զատ է իրենց թռչակէն կամ վարձքէն, և կ'ըսուի Շահ: Իս շահը՝ քանի որ իմաստնոց թիւը աւելնայ և ուսմունքները ու գըրքերը դիւրաւ և առատ տարածելու հնարքները շատնան, կը նուազի. բայց ոչ երբէք անանկ անարդ արժէքի մէջ կ'ինայ, որ իր օգտակարութեանը արժէքէն վար ըլլայ:

Ի այց աս շահին բանը, որ գործառուաց հետ ալ մեծ վերաբերութիւն ունի, աւելի աղէկ կ'իմանանք երբոր ընցից եկամուտներուն վրայ խօսինք յաջորդ հատուածին մէջ:

Ա երը ըսինք թէ գործառուի մը թռչակը աւելի է քան զգործաւորի և քան զիմաստնոյ. պատճառը ան է՝ որ գործառուին աշխատանքը և հոգն ու մոտմուքն ալ անոնցմէ շատ է: Պարձառու մը ինչուան որ ձարտարութեան մը ձեռք զարնէ՝ կարօտ է զանազան միջոցներու. որոնց մէջ գլխաւորներն են ինչք և հմտութիւն առաջ տանելու ձարտարութեանը: Իս երկու գժուար միջոցները ձեռք բերելու համար գործառուի մը քաշած նեղութիւնը յայտնի է թէ որչափ կ'աւելցընեն իր արդիւնքը հասարակ աշխատաւորէ մը: — Հմտութիւն ստանալու համար թերեւս աւելի իր միտքն ու մարմինը յոգնեցուցած ըլլայ. ինչք ձարելու համար ալ, թէ որ իր պապերուն ոսկիներուն վրայ նստող ժառանգներէն չէ, ըսել է որ սիրտ մաշեցուցած է. որովհետեւ ինչք փոխ առ-

նելու համար չէ թէ միայն զգաստ, գործունեայ և արդար մարդ ըլլալու է, հապանակ առաքինութեանցը վկայող, ու փափաքը լեցընելու կարողութիւն ունեցող մըն ալ: Իս դժուար հոգերէն զատ դժուարագոյն մըն ալ կայ, որ Շահը հաստելու ատեն ինչ վնաս որ պատահի՝ գործառուն պիտի քաշէ, իսկ գործաւորը կամ իմաստունը բնաւ չեն քաշեր, իրենց ծառայութեանը վարձքը ատենին կ'առնուն,, , ինչպէս կ'ըսէ կառնիէ:

Ուղակի կարգ են նաև տէրութեան պաշտօնատեարց առած ոռածիչը<sup>1</sup>, ծառաներու և անոնց նման աշխատաւորաց ամսագինը<sup>2</sup>, փաստաբաններու, բըժիշկներու գրիպուրը<sup>3</sup>, և այլն:

Հ. Տ. Թ.

### Ա Մ Ո Ղ Զ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ռազ:

Երեւելու բժիշկներ մարդուս կազմուածքին վրայ անթիւ քննութիւններ ու փորձեր ընելով, յայտնի կերպով ստուգած են որ մարդուն այն գործարանները որ շատ ու մանր մանր ջղերէ ու կըտորներէ կը բաղկանան՝ աւելի ենթակայ են տեսակ տեսակ հիւանդութեցքան թէ ուրիշ անդամները. և ասոնց մէջ գլխաւոր աչքը կը սեպեն, որ ամէն անդամներնէս աւելի փափուկ ու գեղեցիկն է, միանգամայն ամենէն աւելի հիւանդութեանց ենթակայ: Իսոր համար շատ հարկաւոր կը սեպենք առողջութեան վրայ խօսել ուզելով նախ աչքի վրայ խօսիլ, և քննել թէ բաց ՚ի լուսոյն մեր աչքին վրայ ըրած ազդեցութենէն՝ ուրիշ որ բաները աչքին տեսողական զօրութիւնը կ'աճեցընեն ու կը պակսեցընեն, և թէ ինչ

<sup>1</sup> Appointement.

<sup>2</sup> Gage.

<sup>3</sup> Honoraire. ՏՃ. Այս տէրի որուն Փաւստու Բուղանդացին էօլի կ'ըսէ: